Կազմված է 2020 թվականի դեկտեմբերի 1-ին -ին,

բաղկացած է թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ « 01 »-Ի N4226-Լ ՀՐԱՄԱՆՈՎ Առողջապահության նախարար՝ Ա.ԹՈՐՈՍՅԱՆ	Տպագրված է ընդամենը 3 օրինակ ՕՐԻՆԱԿ 2 ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱՆԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 05.09.1995թ. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 264.140.01712 ՀՎՀՀ՝ 00011624 15.10.2020թ. ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ ________ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ « 04 » դեկտեմբերի 2020թ.

ՀՀ ԱՆ «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ԼՐԱՑՈՒՄ)

ք.Երևան - 2020թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Կանոնադրության 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ ենթակետով՝

«19) Հայաստանի Հանրապետությունում կենսաբժշկական տեղեկատվության կուտակում, պահպանություն և սպասարկում, որը ներառում է գրադարանային ֆոնդերի շարունակական ձևավորումը և համալրումը, հանրապետության առողջապահական կառույցների գրադարաններին և ինֆորմացիոն կենտրոններին մեթոդական օգնության ցուցաբերումը, բուժաշխատողներին տեղեկատվությամբ ապահովումը»:

2. Կանոնադրության 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ ենթակետերով՝

«14) Իրականացնում է Առողջապահության համակարգի գործունեության գնահատման (ԱՀԳԳ) զեկույցի կազմման աշխատանքներ:

15) Իրականացնում է առողջապահական հիմնարկներից ֆինանսական վիճակագրության հավաքագրում և վերլուծություն:

16) Իրականացնում է Առողջապահության ազգային հաշիվներին վերաբերող տվյալների հավաքագրում և ԱԱՀ զեկույցի կազմման աշխատանքներ:

17) Իրականացնում է ոչ վարակիչ հիվանդությունների վարքագծային ռիսկի գործոնների տարածվածության ուսումնասիրություն, այդ թվում՝ ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցմանը և կանխարգելմանը վերաբերող հանրային առողջապահության ծրագրեր

18) Իրականացնում է գրադարանային ֆոնդի մշակում և պահպանում, պաշտպանվածության և անվտանգության ապահովում, գրադարանայնի ֆոնդի համալրում գնումների, նվիրատվությունների և այլ միջոցներով, քայքայված, արդիականությունը կորցրած գրադարանային միավորների զտում, օտարում, գրադարանից օգտվողների գրադարանային-տեղեկատվական ու մատենագիտական սպասարկման կազմակերպում:

19) Մասնակցում է ներհանրապետական և միջազգային գրափոխանակմանը, պատրաստում և հրատարակում է կենսաբժշկության բնագավառի ազգային և արտասահմանյան տպագիր արտադրանքի հավաքածուի համահավաք գրացուցակներ, մեթոդական ձեռնարկներ, կենսամատենագիտություններ, սեղմագիր ժողովածուներ, անդամակցում է միջազգային գրադարանագիտության բնագավառի կազմակերպություններին, կազմակերպում է գրադարանային գործի դասընթացներ՝ մասնագիտական հմտություններ ուսուցանելու նպատակով»:

Սույն լրացումը հանդիսանում է 15.10.2020 թվականին գրանցված ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության անբաժանելի մասը: